ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 16-ը ապրիլի 2019թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖ Շ բաժնի առաջատար մասնագետ Ա. Սաֆարյան,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

19.04.2019թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Օդորակիչների նորոգման և սպասարկման» ծառայությունների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«Թերմոկոն» ՍՊԸ
2.	«ՏԵԽՆՈՖՐԻԶ» ՍՊԸ
3.	Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

Ա/Ձ Մեսրոպ Աղազարյանի կողմից ներկայացված հայտով՝ **տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին (Հավելված N 2.1)-ում** բացակայում էր *ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը:*

«Թերմոկոն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ **մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը (Հավելված N 2)** չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես՝ *(փաստաթուղթը հաստատված չէրէլեկտրոնային թվային ստորագրությամբ):*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **Ա/Ձ Մեսրոպ Աղազարյանին և «Թերմոկոն» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

25.04.2019թ., ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ **Ա/Ձ Մեսրոպ Աղազարյանի** և **«Թերմոկոն» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են անհամապատասխանությունները և վերջիններիս հայտերը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/մ	Ծառայության անվանումը	Պլանավորված նախահաշվային գին ՀՀ դրամ	«Թերմոկոն» ՍՊԸ-ի **առաջարկած գին /ՀՀդրամ/**			«ՏԵԽՆՈՖՐԻԶ» ՍՊԸ-ի **առաջարկած գին /ՀՀդրամ/**			Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի-**ի առաջարկած գին /ՀՀդրամ/**		
			ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ
1.	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	**841,900**	595,000	119,000	714,000	810,200	0	810,200	665,000	0	665,000

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակիցների առաջարկած գները:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/

3.3 Ըստ ներկայացված տվյալների «ՏԵԽՆՈՖՐԻԶ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի ԱԱՀ վճարող չեն:

3.4 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղ/եր/ զբաղեցրած մասնակից/ների/ որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **26.04.2019թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ ***«Թերմոկոն» ՍՊԸ -ն:***

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/13» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ներկայացման վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Հանձնաժողովի քարուղար՝	Ա. Մաղաքյան